Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 26-06-2020 թ. որոշմամբ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
հիմնադրամի 2019 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ԽԱՐԻՍԽ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 30
1.3 Պետական գրանցման համարը		222.160.1006494
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2018-02-20
1.5 ՀՎՀՀ-ն		02673243
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)93400559
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		
1.8 Էլեկտրոնային փոստը		aram@quipu.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Սասուն Աղայան		
Հակոբ Խաչատրյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	1	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ծրագրի անվանումը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Երիտասարդական ազգային, մշակութային կենտրոն	77000000
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
9. Հիմնադրի ներդրումը՝		

Digitally signed by
MARTIROSYAN
ARAM
4014900614
Date: 2020.06.30
15:04:47 AMST

9.1 Դրամական միջոցներ	0	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Երիտասարդական ազգային, մշակութային կենտրոն	76560000	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	77616000	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	76560000	

Նշումներ՝

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ 18 թերթից:
թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

«ԽԱՐԻՍԽ»

Համահայկական, Մշակութային Բարեգործական Հիմնադրամ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

12 ամիս ժամանակահատվածի համար

2019թ դեկտեմբերի 31-ի դրությամբ

Երևան – 2020

«Խարիսխ»
Համահայկական, մշակութային բարեգործական
հիմնադրամ
Հայաստանի Հանրապետություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ	էջ
Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	7
Զուտ ակտիվների փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

«ՋԻ ԸՆԴ ՔՈ
ԱՈՒԴԻՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ

"G & Co
AUDIT GROUP" LLC

ՀՀ, ք.Երևան 0038, Լենինգրադյան 4ա
4a Leningradyan, Yerevan 0038, RA
Լիցենզիա ԱԾ N099
Հեռ +37410 399 655
www.gaudit.am , info@gaudit.am

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Խարիսխ» Համահայկական, Մշակութային
Բարեգործական Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին**

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Խարիսխ» համահայկական, մշակութային բարեգործական հիմնադրամի (այսուհետ՝ «Հիմնադրամ») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2019թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն-ները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՄԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՄԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Անընդհատության հիմունքին վերաբերող էական անորոշություն

Ձեր ուշադրություն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություն 2.4-ի վրա, որտեղ նշվում է, որ Հիմնադրամը 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ունի 79,657 հազար դրամ ժամկետանց փոխառություն, որի դիմաց բռնագանձման իրավունքով գրավադրվել է Հիմնադրամին պատկանող 76,560 հազար դրամ սկզբնական արժեքով հողամասը, և որն էլ պետք է օգտագործվի Հիմնադրամի ներդրումային ծրագրերի իրականացման նպատակով: Ինչպես նշված է Ծանոթագրություն 2.4-ում, այս դեպքերը, ի թիվս Ծանոթագրություն 2.4-ում նշված այլ հարցերի, ցույց են տալիս, որ առկա է էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Մեր կարծիքը չի ձևափոխվել այս հարցի կապակցությամբ:

Այլ հանգամանք

Հիմնադրամի 2018 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները աուդիտի չեն ենթարկվել:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր

նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.

- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Հաստատված է
«Ջի ընդ Քո. Աուդիտ Գրուպ» ՍՊԸ

Տնօրեն Գ.Ղլթչյան

Աուդիտոր Ա.Չատինյան
Որակավորման վկայական թիվ 453

29 հունիսի 2020թ.
Երևան

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
«Խարիսխ» համահայկական, մշակութային բարեգործական հիմնադրամ
2019թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ

ԱԿՏԻՎՆԵՐ	Ծանոթագրություններ	31/12/2019 Դ 000	31/12/2018 Դ 000
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	3	*76,560*	-
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		*76,560*	-
Ընթացիկ ակտիվներ			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր		*20*	-
Հարկերի և պարտադիր վճարների գծով գերավճարներ		*2*	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	4	*240*	*415*
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		*262*	*415*
Ընդամենը ակտիվներ		76,822	415
ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Զուտ ակտիվներ			
Կուտակված հավելաճ (չծածկված վնաս)		*(2,864)*	-
Ընդամենը զուտ ակտիվներ		(2,864)	-
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Փոխառություններ		-	-
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		-	-
Ընթացիկ պարտավորություններ			
Փոխառություններ	5	*79,657*	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր		-	*40*
Հարկերի և պարտադիր վճարների գծով պարտավորություններ		*29*	*20*
Եկամուտներին վերաբերող շնորհներ	6	-	*355*
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		*79,686*	*415*
Ընդամենը կապիտալ և պարտավորություններ		76,822	415

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի 10-ից 18-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Տնօրեն
Հակոբ Խաչատրյան

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

«Խարիսխ» համահայկական, մշակութային բարեգործական հիմնադրամ

2019թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Ծանոթագրություններ	2019 դրամ 000	2018 դրամ 000
Շարունակական գործունեություն			
Հասույթ		-	-
Ինքնարժեք		-	-
Համախառն շահույթ		-	-
Այլ եկամուտներ	6	355	645
Իրացման ծախսեր		-	-
Վարչական ծախսեր	7	(558)	(645)
Այլ ծախսեր		(4)	-
Գործառնական վնաս		(207)	-
Ֆինանսական ծախսեր	8	*(2,657)*	-
Ֆինանսական եկամուտներ			
Շարունակական գործունեությունից վնաս մինչև հարկումը		(2,864)	-
Ընդհատված գործունեություն			
Ընդհատված գործունեությունից շահույթ/վնաս		-	-
Շահութահարկի գծով ծախս		-	-
Տարվա վնաս հարկումից հետո		(2,864)	-
Այլ համապարփակ ֆինանասական արդյունք			
Տարվա ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունք		(2,864)	-

Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի 10-ից 18-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Տնօրեն
Հակոբ Խաչատրյան

Զուտ ակտիվների փոփոխությունների մասին հաշվետվություն
«Խարիսխ» համահայկական, մշակութային բարեգործական հիմնադրամ
2019թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

դրամ 000

	Չծածկված վնաս	Ընդամենը
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2017թ.	-	-
Տարվա վնաս	-	-
	-	
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2018թ.	-	-
Տարվա վնաս	(2,864)	(2,864)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.	(2,864)	(2,864)

Զուտ ակտիվների փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի 10-ից 18-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Տնօրեն
Հակոբ Խաչատրյան

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
«Խարիսխ» համահայկական, մշակութային բարեգործական հիմնադրամ
2019թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	01.01.2019-31.12.2019	01.01.2018-31.12.2018
	₶ 000	₶ 000
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		
Որպես նվիրաբերություն ստացված դրամական միջոցներ	-	1,000
Վճարումներ ծառայությունների դիմաց	(143)	(293)
Վճարումներ աշխատակիցներին	(341)	(222)
Վճարումներ հարկերի և այլ պարտադիր վճարների գծով	(132)	(69)
Այլ մուտքեր	-	-
Այլ ելքեր	-	-
Գործառնական գործունեությունից ստացված / գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(616)	415
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		
Ոչ ընթացիկ ակտիվների ձեռք բերում	-	-
Ոչ ընթացիկ ակտիվների վաճառքից մուտքեր	-	-
Ներդրումային գործունեությունից ստացված / գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	-	-
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից		
Ստացված փոխառություններ	440	-
Փոխառություններ մարում	-	-
Վճարված տոկոսներ	-	-
Ֆինանսական գործունեությունից ստացված / գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	440	-
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/նվազում	(176)	415
Արտաժույթի փոխարժեքային տարբերություններ	-	-
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	415	-
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամանակաշրջանի վերջի դրությամբ	240	415

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի 10-ից 18-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Տնօրեն
Հակոբ Խաչատրյան

1. Հիմնադրամի գործունեության բնույթը

«Խարիսխ» համահայկական, մշակութային բարեգործական հիմնադրամը (այսուհետև՝ Հիմնադրամ) իրավաբանական անձ հանդիսացող ոչ առևտրային կազմակերպություն է: Հիմնադրամը գրանցվել է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 2018թ. փետրվարի 20-ին, պետական գրանցման համարն է 222.160.1006494, ՀՎՀՀ-ն՝ 02673243

Համաձայն Հիմնադրամի կանոնադրության Հիմնադրամի նպատակն է.

- Նպաստել Հայաստանի Հանրապետությունում սպորտի և մշակույթի զարգացմանը,
- Սպորտի և մշակույթի բնագավառում բացահայտել և աջակցել տաղանդավոր անհատներին, ուսանողներին, երիտասարդներին

Հիմնադրամի շահառուներն են ՀՀ քաղաքացիները

Հիմնադրամը կարող է զբաղվել ձեռնարկատիրական ցանկացած տեսակի գործունեությամբ միայն այն դեպքում, երբ դա կծառայի այն նպատակների իրականացմանը, որոնց համար ստեղծվել է Հիմնադրամը և համապատասխանում է այդ նպատակներին

Հիմնադրամի իրավաբանական հասցեն է՝
Հայաստանի Հանրապետություն, 0010 քաղաք Երևան, Հանրապետության 30 շենք

Հիմնադրամի հիմնադիրն է ՀՀ քաղաքացի Միքայել Վաղինակի Մանուկյանը:

2. Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականության և գնահատումների համառոտ ամփոփում

2.1. Համապատասխանությունը

Հաշվապահական հաշվառումը վարվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան: Ֆինանսական հաշվետվությունները կազմվել են համաձայն Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների:

2.2. Չափման հիմքը

Ակտիվներն ու պարտավորությունները ներկայացված են սկզբնական (պատմական) կամ ամորտիզացվող արժեքով:

2.3. Չափման և ներկայացման արժույթը

Հիմնադրամի համար որպես չափման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթ ընդունվել է ազգային արժույթը՝ ՀՀ դրամ (դրամ): Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

2.4. Անընդհատությունը

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները կազմվել են ելնելով անընդհատության հիմունքից, որը ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում բնականոն գործունեության ընթացքում:

ՀՀ կառավարությունը 2018 թվականի մարտի 29-ի N 340-Ա որոշումով հավանություն է տվել Հիմնադրամի կողմից կողմից ներկայացված՝ Երևանի Մոնթե Մելքոնյան փողոցին հարակից 1,1 հեկտար մակերեսով հողամասում իրականացվելիք ներդրումային ծրագրին և համաձայնություն է տվել Երևան քաղաքի Մոնթե Մելքոնյան փողոցին հարակից 1,1 հեկտար մակերեսով, 76,560 հազար ՀՀ դրամ կադաստրային արժեք ունեցող հողամասը (այսուհետ՝ հողամաս) ուղղակի վաճառքի միջոցով օտարել հիմնադրամին:

Վերոնշյալ որոշմամբ սահմանվել են պայմաններ և առաջարկություններ, որոնք տեղ են գտել 2019թ նոյեմբերի 5-ին Հիմնադրամի և Երևանի քաղաքապետարանի միջև կնքված հողամասի առուվաճառքի մասին պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր): Պայմանագրով Հիմնադրամը Երևանի քաղաքապետարանից գնել է ք.Երևան, Մելքոնյան փողոցի հ. 22/2 հասցեում գտնվող 1.1 հա մակերեսով հողամասը 76,560 հազար ՀՀ դրամով:

Համաձայն Պայմանագրի՝ հիմնադրամը պարտավոր է.

- Հողամասը օգտագործել բացառապես երիտասարդական, ազգային, մշակութային կենտրոն կառուցելու նպատակով և իր նպատակային ու գործառնական նշանակությանը համապատասխան,
- Ներդրումային ծրագրի շրջանակներում կատարել ընդհանուր՝ շուրջ 22 մլն ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի ներդրում,
- Ներդրումային ծրագիրն իրականացնել քաղաքաշինական փաստաթղթերը ներկայացնելուց հետո 36 ամիս ժամկետում:

Պայմանագրով սահմանված է, նաև որ ՀՀ կառավարության 2018 թվականի մարտի 29-ի N 340-Ա որոշումով սահմանված 22 մլն ԱՄՆ-ի դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով ներդրում չկատարելու և սահմանված ժամկետում ներդրումային ծրագիրը չիրականացնելու պարագայում նախատեսվում է տուգանք 38,280,000 (երեսունութ միլիոն երկու հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամի չափով:

Հողամասի ձեռք բերման դիմաց վճարումը կատարել է «Մեմրի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Փոխատու), իսկ վճարված գումարը Փոխատուի և Հիմնադրամի միջև 2019թ օգոստոսի 27-ին կնքված փոխառության պայմանագրով (այսուհետ՝ Փոխառության պայմանագիր) և դրան կից համաձայնագրով համարվել է որպես Հիմնադրամին հանձնված փոխառության գումար՝ տարեկան 10 տոկոս տոկոսադրույքով և տրամադրվել է մինչև 2019թ նոյեմբերի 30-ը վերադարձնելու պայմանով: Վերոնշյալ փոխառության պայմանագրի շրջանակներում Հիմնադրամին են տրամադրվել նաև ևս 440 հազար դրամ փոխառության գումար՝ դրամական միջոցների տեսքով:

2019թ նոյեմբերի 19-ին հիմնադրամի և Փոխատուի միջև կնքվել է անշարժ գույքի գրավի պայմանագիր (Այսուհետ՝ Գրավի պայմանագիր), որով ի ապահովումն կողմերի միջև կնքված Փոխառության պայմանագրով Հիմնադրամի ստանձնած պարտավորությունների կատարման գրավադրվել է Հիմնադրամի կողմից 2019թ նոյեմբերի 5-ին ձեռք բերված ք. Երևան, Մելքոնյան փողոցի հ. 22/2 հասցեում գտնվող հողամասն ամբողջությամբ (այսուհետ՝ Գրավի առարկա)

Գրավի պայմանագրով սահմանվել է, որ Հիմնադրամի կողմից պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Փոխատուի պահանջները կբավարարվեն առանց դատարան դիմելու՝ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի համաձայն:

Ընդ որում՝ Փոխատուի կողմից բռնագանձման ծանուցումը Հիմնադրամին հանձնելուց երկու ամիս հետո Փոխատուն իրավունք ունի իրացնել Գրավի առարկան:

2019թ դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամը չի մարել ստացված փոխառության գումարը և դրա դիմաց հաշվեգրված տոկոսները՝ ընդհանուր 79,657 հազար դրամ գումարով, ինչի հետևանքով փոխատուի կողմի 2021թ հունվարի 9-ին ներկայացվել է հողամասի բռնագանձման պահանջ:
Վերոնշյալ պարտավորությունը չի մարվել նաև սույն ֆինանսական հաշվետվությունները ստորագրելու ամսաթվի դրությամբ, ավելին՝ փոխառության նկատմամբ շարունակում են հաշվեգրվել տոկոսներ:

Այնուամենայնիվ՝ Փոխատուի կողմից Հիմնադրամին է ներկայացվել գրավոր հավաստում առ այն, որ Փոխատուն 2020թ մայիսի 12-ից սկսած առնվազն մեկ տարի քայլեր չի ձեռնարկի գրավի առարկայի իրացման ուղղությամբ, հնարավորություն ընձեռելով Հիմնադրամին իրականացնելու իր նպատակները: Հիմնադրամի ղեկավարությունը հույս ունի մինչ այդ ժամկետի ավարտը ներգրավել դրամական միջոցներ շնորհատուների միջոցով՝ իր պարտավորությունները մարելու և ծրագրերն իրականացնելու նպատակով

2.5. Համադրելիությունը

Ընթացիկ ֆինանսական տարվա տվյալները համեմատելի են նախորդ ժամանակաշրջանի համար ներկայացված տվյալների հետ:

2.6. Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են ստորև նշված կատեգորիաներում՝ ըստ ֆինանսական ակտիվների ձեռքբերման նպատակի: Հիմնադրամը չունի որպես «մինչև մարման ժամկետը պահվող» դասակարգված ֆինանսական ակտիվներ: Ստորև ներկայացված է Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հաշվեկշռի ամսաթվին առկա յուրաքանչյուր կատեգորիայի համար, բացառությամբ հեջավորման պահանջներին համապատասխանող ֆինանսական ակտիվների:

<u>Փոխառություններ և դեբիտորական պարտքեր</u>

Փոխառություններն ու դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնք գնանշված չեն ակտիվ շուկայում:

Դրանք առաջանում են ծառայությունների մատուցման արդյունքում (օրինակ՝ առևտրային դեբիտորական պարտքեր), բայց ներառում են նաև այլ պայմանագրային դրամային ակտիվներ: Այդպիսի ֆինանսական ակտիվները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են ձեռքբերմանը կամ թողարկմանը, իսկ հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսի մեթոդը՝ հանած արժեզրկման պահուստը:

Արժեզրկման պահուստը ճանաչվում է, երբ առկա է անկողմնակալ վկայություն (օրինակ՝ կողմերն ունեն զգալի ֆինանսական դժվարություններ, չեն կատարում ստանձնած պարտավորությունները կամ ուշացնում են վճարումները) առ այն, որ դեբիտորական պարտքը սահմանված ժամկետներում հնարավոր չի լինի ամբողջությամբ հավաքագրել: Նման պահուստի գումարն ակտիվի զուտ հաշվեկշռային արժեքի և արժեզրկված պարտքերի գծով ապագա դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքի տարբերությունն է: Զուտ առևտրային դեբիտորական պարտքերի համար նման պահուստները հաշվառվում են առանձին, և վնասը ճանաչվում է Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ որպես

այլ ծախս: Եթե հաստատվում է, որ առևտրային դեբիտորական պարտքն անհավաքագրելի է, ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը դուրս է գրվում ասոցիացված պահուստից:

Դրամական միջոցները և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են դրամական միջոցներ դրամարկղում, ցպահանջ ավանդները բանկում, երեք ամիս կամ երեք ամսից պակաս մարման ժամկետով այլ կարճաժամկետ ներդրումներ և բանկային օվերդրաֆտներ՝ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով:

2.7. Վարձակալված ակտիվներ

Պայմանագրի սկզբում Հիմնադրամը գնահատում է արդյոք պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն: Պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն, եթե այդ պայմանագրով հատուցման դիմաց՝ որպես փոխանակում որոշակի ժամանակահատվածի ընթացքում փոխանցվում է որոշակիացված ակտիվի օգտագործման հսկողության իրավունքը:

Գնահատելու համար, թե արդյոք պայմանագրով փոխանցվում է որոշակիացված ակտիվի օգտագործման հսկողության իրավունքը, Հիմնադրամը օգտագործում է ՖՀՄՍ 16-ի վարձակալության սահմանումը: Այս քաղաքականությունը կիրառելի է 2019թ. հունվարի 1-ին կամ հետո կնքված պայմանագրերի համար: Այնուամենայնիվ՝ ինչպես նախորդ, այնպես էլ հաշվետու տարում Հիմնադրամը վարձակալությամբ ստացված և տրված ակտիվներ չի ունեցել, այդ իսկ պատճառով ՖՀՄՍ 16-ի անցումը Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա որևէ կերպ չի ազդել:

2.8. Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները գնահատվել են սկզբնական (ձեռք բերման, կառուցման) արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Սկզբնական արժեքը ներառում է հիմնական միջոցների ձեռքբերմանն ուղղակիորեն վերագրելի ծախսումները: Սեփական ուժերով կառուցված ակտիվների սկզբնական արժեքը ներառում է նյութերի արժեքը, ուղղակի աշխատուժի գծով ծախսերը, ակտիվն իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ցանկացած այլ ծախսումները, ակտիվի ապատեղակայման և քանդման ծախսերը, տեղանքի վերականգնման ծախսերը, ինչպես նաև կապիտալացված փոխառության ծախսումները:

Հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են այն առանձին ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտները, որին վերաբերում են: Հիմնական միջոցների բաղկացուցչի փոխարինման ծախսերը ճանաչվում են միավորի հաշվեկշռային արժեքում, երբ հավանական է, որ Ընկերություն կկրեն այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները և վերջինիս արժեքը հնարավոր կլինի արժանահավատորեն չափել: Փոխարինվող բաղկացուցչի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է:

Հիմնական միջոցի միավորի օտարումից ստացված շահույթը և վնասը որոշվում են համեմատելով օտարումից ստացվելիք մուտքերը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի հետ և ճանաչվում են զուտ հիմունքով «Այլ եկամուտ» կամ «Այլ ծախսեր» հոդվածում՝ շահույթում կամ վնասում:

Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա՝ հանած դրա մնացորդային արժեքը: Առանձին ակտիվների էական բաղկացուցիչները գնահատվում են, և եթե

բաղկացուցչի օգտակար ծառայության ժամկետը տարբերվում է ակտիվի մնացած մասերի օգտակար ծառայության ժամկետից, ապա այդ բաղկացուցչի մաշվածությունը հաշվարկվում է առանձին: Մաշվածությունը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արժենվազեցման գծային մեթոդով՝ առանձին ակտիվների օգտակար ծառայության ժամկետների ընթացքում: Մաշվածությունը սկսվում է հաշվարկվել այն պահից, երբ ակտիվը մատչելի է դառնում օգտագործման համար :

2.9. Պաշարներ

Պաշարները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով, իսկ հետագայում չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռքբերման, փոխարկման և պաշարները ներկայիս գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները:

Համանման բնույթ և կիրառություն ունեցող բոլոր պաշարների ինքնարժեքի որոշման համար կիրառվում է ինքնարժեքի առաջինը մուտք՝ առաջինը ելք (ՖԻՖՕ) բանաձևը:

2.10. Պահուստներ

Հիմնադրամը ճանաչում է ժամկետի կամ գումարի առումով անորոշ պահուստներ: Որպես պահուստ ճանաչված գումարը պետք է իրենից ներկայացնի հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ ներկա պարտավորությունը մարելու համար պահանջվող ծախսումների լավագույն գնահատականը: Ձեղչման դրույքը պետք է լինի այն դրույքը՝ առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները:

2.11. Եկամուտներ և ծախսեր, շնորհներ

Եկամուտները և ծախսերը հաշվառվել են հաշվեգրման հիմունքով, այսինքն՝ նրանք համարվել են եկամուտ կամ ծախս դրանց տեղի ունենալու պահին անկախ դրանց հետ կապված դրամական միջոցների վճարման կամ ստացման ժամկետից:

Հիմնադրամն ընտրել պետական շնորհների հաշվառման եկամտային մոտեցումը, այսինքն՝ շնորհները և նվիրատվությունները (նվիրաբերությունները) որպես եկամուտ են ճանաչվել այն ժամանակաշրջաններում, որոնց ընթացքում դրանք փոխհատուցել են համապատասխան ծախսումները:

Ակտիվներին վերաբերող շնորհը նվազեցվում է ակտիվի հաշվեկշռային արժեքը հաշվարկելիս: Շնորհը արտացոլվում է շահույթում կամ վնասում մաշվող (ամորտիզացվող) ակտիվի օգտակար ծառայության ընթացքում՝ նվազեցված մաշվածության ծախսի ձևով:

Շնորհների գծով եկամուտները Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ներկայացվում են որպես շահույթի կամ վնասի մաս «Այլ եկամուտներ» հոդվածի ներքո:

3. Հիմնական միջոցներ

	Հողամասեր	Ընդամենը
Սկզբնական արժեք		
Մնացորդը առ 31.12.2018թ.	-	-
Գնում	76,560	76,560
Օտարում	-	-
Մնացորդը առ 31.12.2019թ.	76,560	76,560
Կուտակված ամորտիզացիա		
Մնացորդը առ 31.12.2018թ.	-	-
Հաշվարկված ամորտիզացիա	-	-
Օտարում	-	-
Մնացորդը առ 31.12.2019թ.	-	-
Հաշվեկշռային արժեք		
Մնացորդը առ 31.12.2018թ.	-	-
Մնացորդը առ 31.12.2019թ.	76,560	76,560

Հողամասի ձեռք բերման գործարքի վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ծանոթագրություն 2.4-ում

4. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	31.12.2019	31.12.2018
Դրամական միջոցներ դրամարկղում	353	405
Դրամական միջոցներ բանկային հաշվում ՀՀ դրամով	187	10
Ընդամենը	**540**	**415**

5. Փոխառություններ

	- 2019 -	- 2018 -
«Մեմրի» ՍՊԸ	79,657	-
Ընդամենը	**79,657**	-

79,657 հազար դրամ փոխառության գումարից 2,657 հազար դրամը կազմում եմ հաշվեգրված տոկոսները: Փոխառությունը ձեռք է բերվել տարեկան 10 տոկոս տոկոսադրույքով և տրամադրվել է մինչև 2019թ նոյեմբերի 30-ը վերադարձնելու պայմանով, սակայն դեռևս չի մարվել:

6. Եկամուտներին վերաբերող շնորհներ

	2019	2018
Մնացորդը տարեսկզբին	**355**	-
Ստացված շնորհներ	-	1,000
Եկամուտ ճանաչված շնորհներ	(355)	(645)
Մնացորդը տարեվերջին	**355**	**355**

Եկամուտներին վերաբերող շնորհը ստացվել է Հիմնադրամի նախկին տնօրեն Միքայել Վաղինակի Մանուկյանից, ով 2019թ սեպտեմբեր ամսին ազատվել է աշխատանքից:Ստացված շնորհի գծով կցված և չկատարված պայմաններ և այլ պայմանականություններ չկան:

7. Վարչական ծախսեր

	- 2019 -	- 2018 -
Աշխատավարձի գծով ծախսեր	468	312
Հաշվապահական և խորհրդատվական ծախսեր	-	300
Բանկային ծառայությունների գծով ծախսեր	62	33
Այլ վարչական ծախսեր	28	-
Ընդամենը	**558**	**645**

8. Ֆինանսական ծախսեր

Ֆինանսական ծախսերը կազմում եմ փոխառության տոկոսները, որի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 5-ում:

9. Կապակցված կողմերի հետ գործարքներ

Առևտրային գործարքներ

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Հիմնադրամը կապակցված և այլ կողմերի հետ առևտրային գործարքներ չի իրականացրել:

Գործարքներ ղեկավարության հետ

- *Ղեկավարության վարձատրություն*

Հիմնական ղեկավար անձնակազմի հաշվարկված աշխատավարձը և դրան հավասարեցված վճարումները կազմել են.

	2019	2018
Հաշվարկված աշխատավարձ	468	312

10. Պայմանական դեպքեր և պարտավորություններ

Գրավադրված ակտիվներ

Ինչպես ներկայացված է ծանոթագրություն 2.4-ում 2019թ նոյեմբերի 19-ին հիմնադրամի և Փոխատուի միջև կնքվել է անշարժ գույքի գրավի պայմանագիր, որով ի ապահովումն կողմերի միջև կնքված Փոխառության պայմանագրով Հիմնադրամի ստանձնած պարտավորությունների կատարման գրավադրվել է Հիմնադրամի կողմից 2019թ նոյեմբերի 5-ին ձեռք բերված ք. Երևան, Մելքոնյան փողոցի հ. 22/2 հասցեում գտնվող հողամասն ամբողջությամբ (այսուհետ՝ Գրավի առարկա)

Գրավի պայմանագրով սահմանվել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածին համապատասխան Հիմնադրամի կողմից պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Փոխատուի պահանջները կբավարարվեն առանց դատարան դիմելու: Փոխատուի կողմից բռնագանձման ծանուցումը Հիմնադրամին հանձնելուց հետո երկու ամիս հետո Փոխատուն իրավունք ունի իրացնել Գրավի առարկան առանց հիմնադրամի կամ այլ որևէ երրորդ անձի համաձայնության:

Փոխատուի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել,որ 2020թ մայիսի 12-ից հաշվարկված առնվազն մեկ տարի վերջինիս կողմից քայլեր չեն ձեռնարկվի գրավի առարկայի իրացման ուղղությամբ և հիմնադրամի ղեկավարությունը գտնում է, որ մինչ այդ ժամկետը կկարողանա միջոցներ ներգրավել՝ փոխառությունը մարելու համար:

Ֆինանսական երաշխիքներ և ակրեդիտիվներ

Հիմնադրամը 31.12.2019թ. և 31.12.2018թ. դրությամբ ֆինանսական երաշխիքներ և ակրեդիտիվներ չի ունեցել:

Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Հիմնադրամի գույքը ապահովագրված չէ: Այն ապահովագրված չէ գործունեության ընդհատման և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց առաջացած Հիմնադրամի տարածքում տեղի ունեցած պատահարներից կամ նրա գործունեությունից հասցված վնասից: Քանի դեռ Հիմնադրամը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ էական ազդեցություն ունենալ Հիմնադրամի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

Իրավական պարտավորություններ

Բացի «Գրավադրված ակտիվներ» ծանոթագրությունում նշված դեպքից Հիմնադրամի ղեկավարությունը տեղյակ չէ Հիմնադրամի դեմ հարուցված որևէ փաստացի, անավարտ կամ սպառնացող էական հայցերի և պահանջների մասին:

Պայմանական հարկային պարտավորություններ

Հայաստանի Հանրապետությունում հարկային համակարգը հատկանշական է հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ: Վերջինս հաճախ հստակ չէ, հակասական է և պահանջում է մեկնաբանություններ: Շատ դեպքերում այս կամ այն հարցում տարբեր հարկային և այլ իրավասու մարմիններ ունեն տարբեր մեկնաբանություններ: Հարկային խնդիրներն ուսումնա-

սիրվում են հարկային մարմինների կողմից, որոնք օրենսդրությամբ լիազորված են հաշվարկել տուգանքներ և տույժեր:

Այս փաստերը Հայաստանի Հանրապետությունում կարող են այլ երկրների համեմատությամբ էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ Հիմնադրամը չունի լրացուցիչ հարկային պարտավորություններ և պահուստ չի ձևավորել լրացուցիչ հարկային պարտավորությունների գծով:

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 30.06.2020 14:02